



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 մարտի 2022 թվականի թիվ 41-Ա

ք. Երևան

«ՇԱՐԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի փետրվարի 25-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 7 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*,

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցող «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի փետրվարի 20-ին եթերում Օրենքով և Հանձնաժողովի՝ 2021 թվականի հուլիսի 1-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշումով ամրագրված՝ արգելված ժամանակահատվածում *գրեհկաբանություն և հայհոյախոսություն պարունակող* տեսալսողական հաղորդումների հեռարձակման սահմանափակումների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի փետրվարի 25-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի փետրվարի 25-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ կազմված արձանագրության՝ Հեռարձակողի «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի կողմից՝

«2022 թվականի փետրվարի 20-ին հեռարձակված **«Հայլուր»** լրատվական հաղորդման ժամը 20:30-ի թողարկման տեսանյութերից մեկում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ոստիկանությանն ուղղված գրությունը (20:59:21-20:59:27), որում առկա է **հայհոյախոսություն**, մասնավորապես՝ **«Ֆուցն»**, **«բոզ»**, **«իվ Գանդոն՝ ֆանտաստ գրողի իմաստով»**, **«չաթախ»**, **«Ստամբուլի բիճ»**, **«բոզի տղա»**։

Հանձնաժողովը, 2022 թվականի փետրվարի 25-ին հարուցված վարչական վարույթի մասին, ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ վերջինս կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները։

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի մարտի 02-ին Հանձնաժողով ներկայացված իր պարզաբանումներում մասնավորապես հայտնում է.

«Հանձնաժողովի ծանուցմանը կից ներկայացված արձանագրության մեջ հղում է կատարված Հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 109-Ս որոշման 2-րդ կետին, համաձայն որի անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում, ի թիվս այլնի, այն տեսալսողական հաղորդումները, որոնք պարունակում են գռեհկաբանություն և հայհոյախոսություն»։

Վերոգրյալի կապակցությամբ նախնառաջ հարկ ենք համարում հայտնել, որ սույն վարչական վարույթի հիմք հանդիսացած տեսանյութը հանդիսանում է «Հայլուր» լրատվական հաղորդաշարի հերթական կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը։ Այսպես, հանրահայտ փաստ է, որ բացառապես բոլոր հեռուստարևկերություններն ունեն լրատվական հաղորդաշարեր, որոնք եթեր են թողարկվում օրվա տարբեր ժամերի ընթացքում։

Ինչ վերաբերում է Ձեր կողմից Արձանագրության և ծանուցման մեջ մեջբերված բառերին, ապա հարկ ենք համարում հատուկ նշել, որ նշյալ բառերը որևէ կերպ չեն հնչեցվել և/կամ արտաբերվել լրագրողի կողմից։ Ավելին, նշյալ բառերը տեղ են գտել oragir.news լրատվականի կողմից ՀՀ Ոստիկանությանը հասցեագրված հարցմանն ի պատասխան ՀՀ Ոստիկանության կողմից տրված պաշտոնական պարզաբանման շրջանակներում։ ՀՀ Ոստիկանության կողմից տրված պաշտոնական պարզաբանումը չի փոխվել, չի խմբագրվել, դրա բովանդակությունը որևէ կերպ չի խեղաթյուրվել, ավելին՝ բոլոր անհրաժեշտ ռեկվիզիտները պահպանվել են։ Մտացվում է, եթերի ընթացքում երբևէ չեն հնչեցվել ցենզուրայից դուրս արտահայտություններ, դրանք, հանդիսանալով ՀՀ Ոստիկանության պաշտոնական պարզաբանումները, պարզապես մեկ կարճ դրվագով հպանցիկ ցուցադրվել են եթերի ընթացքում։

Միաժամանակ անդրադառնալով Արձանագրության մեջ արված այն դիտարկմանը, թե հաղորդումը կարող էր եթեր հեռարձակվել 24:00-ից 06:00-ն ընկած ժամանակահատվածում, ապա հարկ ենք համարում հայտնել, որ տեսալսողական մեդիայի ոլորտում ծավալած մեր տարիների գործունեության շրջանակներում դեռևս երբևիցե չենք հանդիպել մի իրավիճակի, որտեղ լրատվական հաղորդման եթեր թողարկելը թույլատրելի լիներ բացառապես 24:00-ից մինչև 06:00-ն ընկած ժամանակահատվածում, այն էլ այն նյութի պայմաններում, որն իրենից ենթադրում է որևէ պետական մարմնի պաշտոնական պարզաբանումը»։

Հեռարձակողն իր պարզաբանման մեջ նշել է նաև, որ իրենք մտում են նույն համոզմունքին, որ վերոնշյալ հարցը չպետք է քննարկվի Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում, քանի որ այն ամբողջովին գտնվում է էթիկայի հանձնաժողովի տիրույթում, որին մոտ օրերս (*էթիկայի*) հանձնաժողովը կանդրադառնա:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ *«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը»:*

Հիմք ընդունելով Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանձնաժողովն 2021 թվականի հուլիսի 01-ին թիվ 109-Ս որոշումով սահմանել է անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների չափորոշիչները:

Հանձնաժողովի, «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին», թիվ 109-Ս որոշման հավելվածի 2-րդ մասի 11-րդ կետը սահմանում է.

«2. Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն տեսալսողական հաղորդումները, որոնք՝

11) պարունակում են գրեհկարանություն և հայհոյախոսություն»:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված հետևյալ սահմանափակումը՝ (...) **ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները եթեր չեն կարող հեռարձակվել որոշակի ժամերին՝ 6:00-ից մինչև 24:00-ն ընկած ժամանակահատվածում:**

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Հեռարձակողի «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի փետրվարի 20-ին հեռարձակված **«Հայլուր»** լրատվական հաղորդման ժամը 20:30-ի թողարկման տեսանյութերից մեկում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանն ուղղված գրությունը (20:59:21-20:59:27), որում առկա է հայհոյախոսություն, մասնավորապես՝ **«Ֆուցն», «բոզ», «իվ Գանդոն՝ ֆանտաստ գրողի իմաստով», «չաթլախ», «Ստամբուլի բիճ», «բոզի տղա»** բառերը, որոնք իրենց բնույթով պարունակում են **գրեհկարանություն և հայհոյախոսություն:**

Մինչ Ընկերության դիրքորոշմանն անդրադառնալը հարկ ենք համարում հայտնել հետևյալը: Մասնավորապես, ինչ էլ ասել **գրեհկարանություն և հայհոյախոսություն:**

Այսպես, Էդուարդ Աղայանի **«Արդի հայերենի բացատրական բառարան»**-ի համաձայն¹

«Գրեհկարանություն՝ գ. 1. Գրական լեզվի մեջ գրեհիկ բառեր ու արտահայտություններ գործածելը: 2. Գրական լեզվի մեջ մուտք գործած՝ գործածված գրեհիկ բառ, արտահայտություն»:

Վկայակոչված բառի բացատրությունից երևում է, որ եթերում գրական լեզվով խոսելու կամ գրական լեզվով որևէ տեքստ հրապարակելուց որևէ անձ կարող է գործածել գրեհիկ բառեր: Այսինքն, ստացվում է, որ գրական լեզվով հաղորդակցվելու ընթացքում Ընկերությունը ևս կարող էր ցուցադրել կամ հրապարակել տեսանյութ կամ որևէ

¹http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%A3%D5%BC%D5%A5%D5%B0%D5%AF%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

պաշտոնական պարզաբանում, որոնք իրենց բնույթով գոեհիկ բառեր էին՝ պարզապես գրական լեզվում գործածված:

Վկայակոչված բառարանի համաձայն.²

«Հայհոյախոսություն՝ գ. 1. Հայհոյախոս լինել: 2. հայհոյանք»:

Ինչպես տեսնում ենք **Հայհոյախոսությունը** իր երկրորդ իմաստով նշանակում է **հայհոյանք**: Ամփոփելով Էդուարդ Ադայանի բացատրական բառարանի բացատրությունները՝ նշենք, որ Հանձնաժողովի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման հավելվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված պահանջը նշանակում է, որ արգելվում է մինչև 24:00-06:00 ցուցադրել այնպիսի հաղորդումներ, որոնք իրենց մեջ պարունակում են.

ա) գրական լեզվի մեջ գործածված գոեհիկ բառեր,

բ) հայհոյանք:

Վերադառնալով Ընկերության արտահայտած «(...) *հարկ ենք համարում հայտնել, որ տեսալսողական մեդիայի ոլորտում ծավալված մեր տարիների գործունեության շրջանակներում դեռևս երբևիցե չենք հանդիպել մի իրավիճակի, որտեղ լրատվական հաղորդման եթեր թողարկելը թույլատրելի լիներ բացառապես 24:00-ից մինչև 06:00-ն ընկած ժամանակահատվածում, այն էլ այն նյութի պայմաններում, որն իրենից ենթադրում է որևէ պետական մարմնի պաշտոնական պարզաբանումը*» դիրքորոշմանը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում հայտնել, որ արտահայտած այն միտքը, որ հաղորդումը կարող էր ցուցադրվել ժամը 24:00-06:00-ն՝ ի նկատի ենք ունեցել, բացառապես խնդրո առարկա տեսանյութը, որն իր մեջ պարունակել է **գոեհկաբանություն և հայհոյախոսություն**: Այսինքն, Հանձնաժողովը որևէ կերպ չի միջամտում Ընկերության գործունեությանը (և դա արգելվում է Օրենքով՝ Օրենքի 17-րդ հոդված, 1-ին մաս) և չի միջամտում Ընկերության խմբագրական անկախությանը և կոչ անում անում տեղեկատվական, լրատվական բնույթի հաղորդումները հեռարձակել ժամը 24:00-06:00, առավել ևս, եթե այդ հաղորդումներում ներկայացվում են պաշտոնական դիրքորոշումներ, կարծիքներ, որոնք անհրաժեշտ է հանրայնացնել և ներկայացնել Ընկերության շահառուներին: Հանձնաժողովը, պարզապես նշել է, որ այն հաղորդումները, որոնք պարունակում են **գոեհկաբանություն կամ հայհոյախոսություն**, սակայն կարևոր են Ընկերության տեղեկատվական քաղաքականության իրացման տեսանկյունից, ապա կարող են ցուցադրել նախատեսված կարգով՝ անկախ նրանից դրանք լրատվական, թե՞ մեկ այլ բնույթի են:

Ընկերության կողմից արտահայտած «*Ինչ վերաբերում է Ձեր կողմից Արձանագրության և ծանուցման մեջ մեջբերված բառերին, ապա հարկ ենք համարում հատուկ նշել, որ նշյալ բառերը որևէ կերպ չեն հնչեցվել և/կամ արտաբերվել լրագրողի կողմից:*» դիրքորոշման վերաբերյալ՝ Հանձնաժողովը կարևոր է համարում արտահայտել հետևյալը: Մասնավորապես, Ընկերությունը, իր ստացած լիցենզիայի համաձայն տեսալսողական մեդիածառայություն մատուցող է (միայն ոչ լսողական մեդիա ծառայություն

²http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B0%D5%B8%D5%B5%D5%A1%D5%AD%D5%B8%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

մատուցող), որը կազմելով և սպառողին ներկայացնելով տեսալսողական տեղեկատվություն, նշանակում է, որ Ընկերության կողմից ցուցադրվող հաղորդումները կարող են լինել և՛ տեսանելի, և՛ լսելի՝ ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ:

Այսպես, Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումից պարզ է դառնում, որ մեջբերված բառերը **որևէ կերպ չեն հնչեցվել և/կամ արտաբերվել լրագրողի կողմից, սակայն հանդիսանալով ՀՀ Ոստիկանության պաշտոնական պարզաբանումները, պարզապես մեկ կարճ դրվագով հպանցիկ ցուցադրվել են եթերի ընթացքում (Ընկերության պարզաբանումից ուղիղ մեջ բերում):** Եվ ստացվում է, որ Ընկերությունն իր պարզաբանումում ընդունում է, որ իր կողմից ցուցադրված հաղորդման խնդրո առարկա հատվածը լսելի չի եղել սպառողների կողմից, սակայն այն ցուցադրվել է և տեսանելի է եղել վերջիններիս կողմից: Հետևաբար Հեռարձակողի այն պնդումը, որ դա Օրենքին չի հակասում, սխալ է և ոչ հիմնավոր: Եթե անգամ Հեռարձակողի կողմից եթերի ժամանակ այդ բառերը ցուցադրվել են հպանցիկ, ապա միևնույնն է, արդեն այս դեպքում, այն հեռարձակելիս պետք է պահպանվեն Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված հեռարձակման համար նախատեսված ժամային սահմանափակումը:

Եվս մեկ անգամ անդրադառնանք մշտադիտարկման արդյունքում արձանագրված որոշ բառերի բացատրություններին, ինչպես նաև վերջիններիս բարոյական նշանակությանը:

Այսպես, Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական» բառարանի համաձայն **բոզ** բառը գոյական է, որը նշանակում է **պոռնիկ՝ հասարակաց կին, շնացող մարդ**, սույն բացատրությունից ածանցելով կարող ենք ասել, որ **բոզի տղա** բառն էլ իր հերթին նշանակում է **պոռնիկի տղա, շնացող մարդու որդի**:

Չաթլախ բառը ևս, հայ իրականության մեջ գործածվում է **անբարոյական** իմաստով, այն էլ գերադրական աստիճանի համատեքստում:

Բիճ բառն իր առաջին իմաստով, ըստ Էդուարդ Ադայանի բացատրական բառարանի, նշանակում է **սպօրինի զավակ**: Ածանցելով, ստացվում է Ընկերությունն իր հաղորդման ընթացքում ցուցադրել է **Ստամբուլի սպօրինի զավակ** իմաստը:

Ստացվում է, որ վկայակոչված բառերը, որքան էլ որ գրական լեզվում կարող են կիրառվել կամ ներ են թափանցել գրական լեզու՝ միևնույն է խոսակցական իմաստով դրանք հայհոյանքներ են, որոնք համամարդկային սկզբունքներով շարժվող մարդիկ խուսափում կամ առհասարակ չեն գործածում անչափահասների ներկայությամբ: Իսկ խուսափում, ինչպես նաև չեն գործածում, քանի որ զիտակցում են, որ սույն բառերն իրենց բնույթով, բովանդակությամբ և/կամ բացատրությամբ պարունակում են գոեհիկ իմաստ, և մշտապես հանդես են գալիս որպես հայհոյանք: Անչափահասների իրավունքների պաշտպանության համատեքստում էլ 2021 թվականի հուլիսի 01-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 109-Ս որոշումը:

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ որոշակի ժամերին անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակման

արգելքն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը տվյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես՝ իր մեջ ներառում է անչափահասների առողջությունը, մտավոր ու ֆիզիկական զարգացման վրա հնարավոր բացասական ազդեցությունից պահպանումը: Սույն վարույթի համատեքստում խնդրո առարկան ոչ թե հենց «Հայրեր» հաղորդաշարի այս կամ այն թողարկումն է, այլ կոնկրետ ընթացիկ տարվա փետրվարի 20-ին ժամը 21:30-ի թողարկման այն հատվածը, որտեղ տեղ են գտել վկայակոչված գոեհկաբանությունն ու հայհոյախոսությունները:

Առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ մեդիայում առկա գոեհկաբանությունն ու հայհոյախոսությունն ազդում են հասարակության, հատկապես անչափահասների տրամադրության, սպասումների և առհասարակ կերպի վրա, այնուամենայնիվ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները շարունակում են ցուցադրել այդպիսի հաղորդումներ: Ուստի անհրաժեշտ է մշակել և գործարկել մեխանիզմներ՝ ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին գերծ պահելու համար:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ևս անդրադարձ կա հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական դաստիարակության և այդ հարցերում պետության դերին՝ իրավաչափ համարելով կարգավորող մարմնի միջամտությունը խոսքի ազատությանը՝ ի շահ հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական և բնականոն զարգացման պաշտպանության:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ՄԱԿ, 1989թ.) դրույթներն արտացոլված են նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի վերջին պարբերությունը սահմանում է՝ արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

Քանի որ, Ընկերությունը մատնանշել է այն փաստը, որ սույն հարցը գտնվում է էթիկայի հանձնաժողովի տիրույթում, սակայն ոչ Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի՝ հարկ ենք համարում հայտնել հետևյալը՝ խնդրո առարկան, եթե վերաբերելի լիներ բացառապես էթիկական նորմերը պահպանելուն, ապա վստահաբար մենք ևս համաձայն կլինեինք Ընկերության արտահայտած կարծիքի հետ: Այն պարագայում, երբ առկա է Օրենքի և Հանձնաժողովի համապատասխան որոշումների խախտում, ապա առանց Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի և վարույթի արդյունքում ընդունված եզրափակիչ վարչական ակտի՝ Հանձնաժողովի որոշման, պարզապես հնարավոր չէ, քանի որ Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ստեղծված անկախ, պետական մարմին է և կոչված է կարգավորելու

տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող ընկերությունների գործունեությունը, հետևելու Օրենքով ամրագրված պահանջներին:

Անդրադառնալով Հեռարձակողի էթիկայի հանձնաժողովի որոշմանը՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը: Մասնավորապես, «Շարկ» ՄՊԸ կողմից Հանձնաժողովին հասեցագրված էթիկայի հանձնաժողովի որոշման մեջ ասվում է.

«(...) այնուամենայնիվ, հաշվի առնելով առանձնացված արտահայտությունների՝ հանրային բարոյականության և ընկալման տեսանկյունից խնդրահարույց լինելու հանգամանքը՝ դրսևորել է բարձր գիտակցություն, առանձնակի զգուշավորություն ցուցաբերելով Հեղինակի կողմից հնչեցված և գրավոր տեքստով տեղադրված արտահայտությունների ընտրությանը

- *Տեղադրված արտահայտությունների էկրանին երևալու ժամանակահատվածի նվազագույնին հասցնելու հանգամանքի և*
- *Երազեկել է հանրությանը ձեռնպահություն և զսպվածություն դրսևորել նշված արտահայտությունների կիրառության հարցում՝ այսպիսով նվազագույնի հասցնելով նաև նրանց խոցելիության աստիճանը: (...)»:*

Ստացվում է, որ էթիկայի հանձնաժողովն իր որոշման մեջ արձանագրել է ցուցադրված արտահայտությունների *հանրային բարոյականության և ընկալման տեսանկյունից խնդրահարույց լինելու հանգամանքը*: Այսինքն, նրանք ևս գտել են, որ վկայակոչված արտահայտությունները կարող են պարունակել Օրենքով արգելված կամ սահմանափակումների պահանջի տակ գտնվող բովանդակություն: Էթիկայի հանձնաժողովը նաև գտել է, որ այդ նույն խնդրահարույց արտահայտությունները ցուցադրվել են, սակայն ցուցադրվել են նվազագույն ժամանակահատվածով: Այո՛, արտահայտությունները ցուցադրվել են կարճ ժամանակահատվածում, սակայն այնքան բավական, որ հնարավոր էր ընթերցել այդ արտահայտությունները:

Հանձնաժողովի 24.03.2022թ-ին կայացած նիստում՝ վարչական վարույթի քննարկման ընթացքում Հեռարձակողը ներկայացրեց նաև հետևյալ պարզաբանումները.

1. *Հեռարձակողը այդ նյութը հեռարձակելիս հանդիսացել է նյութի երրորդային վերահեռարձակող: Մասնավորապես, տեղեկությունը տարածվել է ի սկզբանե լրատվամիջոցներով և ֆեյսբուք սոցիալական կայքով, որից հետո նոր վերահեռարձակվել է իրենց կողմից, ընդ որում ֆեյսբուք սոցիալական կայքն ավելի լայն հասանելիություն ունի անչափահասների շրջանում, քան լրատվականը, որին անչափահասները հիմնականում չեն հետևում,*

2. *վարչական մարմնի՝ Հանձնաժողովի կողմից չեն պահպանվել հավասարության սկզբունքը և խախտվել է կամայականության արգելքի սկզբունքն այնքանով, որքանով որ նախընտրական քարոզարշավի ժամանակ երկրի վարչապետի կողմից հանրայնորեն հնչեցված «բռնելու եմ շինեմ» արտահայտությունը լայնորեն տարածվել էր մի շարք լրատվամիջոցներով և դրա վերաբերյալ որևէ դիրքորոշում Հանձնաժողովի կողմից չի հնչեցվել,*

3. *Ցանկացած նորմ, այդ թվում նաև պատասխանատվություն ենթադրող, ունի իր նպատակները: Եթե մենք խոսում ենք նշված նորմի նպատակների մասին, ապա ակնհայտ է, որ այն ուղղված է անչափահասներին որոշակի տեղեկությունների հասանելի*

չդարձնելուն, մինչդեռ մեր փաստարկն այն է, որ դա արդեն իսկ ֆեյսբուքյան ցանցով ավելի լայն հասանելիության է արժանացել, քան իրենց կողմից հեռարձակված տեսանյութը:

Անդրադառնալով վարչական վարույթի քննարման ընթացքում Հեռարձակողի կողմից հնչեցված պարզաբանումներին Հանձնաժողովը կարևոր է համարում նշել հետևյալը՝

Հանձնաժողովը հանդիսանալով տեսալսողական ոլորտը կարգավորող մարմին, ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը և Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորություններն և գործունեությունն իրականացնում է է դեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և ի թիվս այլ այլ օրենքների, իրականացվում է Օրենքի համաձայն: Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքը չի տարածվում համացանցի, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա:

Հետևաբար Հեռարձակողի այն պնդումը որ այդ տեղեկությունը տարածվել է այլ լրատվամիջոցներով և ֆեյսբուք սոցիալական կայքով, որից հետո իրենք են վերահաղորդել և այս պատասխանատվություն ենթադրող նորմը իր նպատակին չի կարող ծառայել, ապա ևս մեկ անգամ փաստենք, որ Հանձնաժողովը չի վերահսկում ֆեյսբուք սոցիալական ցանցը և իր վերահսկողության տիրույթում գտնվող սուբյեկտներից միայն կարող է պահանջել օրենսդրության պահանջների կատարումը: Միաժամանակ փաստենք, որ Հանձնաժողովն Օրենքի համաձայն ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Հետևաբար Հանձնաժողովի կողմից պահպանվել և պահպանվում է հավասարության սկզբունքը, իսկ ինչ վերաբերում է կամայականության սկզբունքի խախտմանը, ապա ևս մեկ անգամ նշենք, որ վարչական վարույթ կարող է հարուցվել և սեփական նախաձեռնությամբ և անձի դիմումի համաձայն: Սակայն դիմում ներկայացնելիս դիմողները պետք է հաշվի առնեն օրենսդրությամբ սահմանված ժամկետները (մասնավորապես Օրենքի 56-րդ և 57-րդ հոդվածներ):

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը

կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմինն գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագրման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11 և 144-րդ կետերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման Հավելվածի 2-րդ մասի 11-րդ կետը և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում, այն «ՇԱՐԿ» ՍՊ ընկերությանը, պատշաճ ձևով, հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

24 մարտի 2022թ.
ք. Երևան